

է բռնութեան ներքեւ. բայց իւր վիճակն
աւելի բարւոքած չէ այսօր քան քրիստո-
նէինը: Անշուշտ վերջնոյս կրած այլեւայլ
տառապանքներէն զերծ է. բայց այլուստ
աւելի եւս անոք ու սորուկ եղած է յաճախ
ինքնակոչ բէկերու ձեռքը: Հոս լաղ բէկերն
այն դերը կը խաղան՝ ինչ որ քուրդ բէկեր
ուրիշ տեղեր, գործակցութեամբ թուրք
պաշտօնէութեան: Հիանալի մրգաւէտ եր-
կրիս պարտէզները մեծ մասամբ բէկերու
ձեռքն են. եւ գիւղացին ստիպուած է յա-
ճախ անոնցմէ պտուղ գնել, տանելու ի
կարին ու վաճառելու, եւ ասով հողա-
լու իւր աղքատին տան գոնէ անհրաժեշտ
պէտքերը: Կտոր մը հող՝ լերան մը զառի-
կողին վրայ՝ հազիւ կրնայ հայթայթել իրեն
հարեհայ մը: Միով բանիւ աղքատ գիւ-
ղացի մըն է, չարքաշ եւ կապուած իւր
հողին: Փոխադրութեան միջոցներն ընդ-
հանրապէս այս հազիւ անցանելի արահետ-
ներուն վրայ միայն ձին ու ջորին են:

* *

Սեւ ծովէն կարին տեսանք գաւառ-
ներու շարք մը, որոնց հնուց ի վեր ապ-